ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ալավերդու համայնքապետարանը ստորև նրկայացնում է համայնքի կարիքների համար «Ալավերդի համայնքի Ս. Թեհլերյան և Հ. Թումանյան փողոցների հենապատերի վերանորոգման աշխատանքների» կատարման նպատակով կազմակերպված N ԼՄԱՔ – ԳՀԱՇՁԲ – 17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրում 2017 թվականի սեպտեմբերի 7-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող ՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 – Պայմանագրի առարկա հանդիսացող վերանորոգման աշխատանքների կատարման ժամկետի փոփոխություն

Փոփոխության նկարագրություն - N ԼՄԱՔ – ԳՀԱՇՁԲ – 17/3 ծածկագրով պայմանագրի 1.3 կետում կատարվել է հետևյալ փոփոխությունը (Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝) «10.09.2017թ.» ժամկետային թվերը փոխարինվել է «29.09.2017թ» թվերով., ինչպես նաև Պայմանագրի թիվ 2 Հավելվածի (Օրացուցային գրաֆիկ) «Աշխատանքների կատարման ժամկետի ավարտը» սյունակի վերջին տողի «10.09.2017թ.» թվերը փոխարինվել են «29.09.2017թ» թվերով:

Փոփոխության հիմնավորում - N ԼՄԱՔ – ԳՀԱՇՁԲ – 17/3 ծածկագրով պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Պատվիրատու՝ Ալավերդու համայնքապետարան